# Հայկական լեռնաշխարհ

## Կայացավ էլեկտրոնային գրքի շնորհանդեսը

Լուսինե ՆԱԶԱՐՅԱՆ



Աշխարհում օնլայն կրթության վերջին զարգացումներին զուգընթաց, կրթական համայնք է ձեւավորում նաեւ հայկական վիրտուալ համալսարանը, որն աշխարհի տարբեր երկրներում ունի շուրջ 3 հազար ուսանող եւ գործում է արդեն մի քանի տարի: Համալսարանը համացանցի միջոցով բոլոր սփյուռքահայ ուսանողների համար իրականացնում է հասանելի եւ մատչելի կրթություն՝ մշակութային, կրթության եւ այլ ուղղություններով: Համալսարանը նպատակ ունի նաեւ համապարփակ կրթություն իրականացնել գերժամանակակից մուլտիմեդիայի միջոցներով եւ առաջիկա ամիսներին թողարկել շուրջ մի քանի էլեկտրոնային գրքեր:

Նշենք, որ ՀՎՀ-ի էլեկտրոնային գրքերի նորարար շարքի առաջին գիրքն արդեն պատրաստ է՝ «Հայկական լեռնաշխարհ» անվամբ, որը ներկայացնում է հայկական մշակույթն ու պատմությունը: Գրքի բովանդակության եւ թողարկման նպատակների մասին երեկ մանրամասնորեն ներկայացրեց հայկական վիրտուալ համալսարանի հիմնադիր-նախագահ ՀԲԸՄ կենտրոնական վարչական ժողովի անդամ **Երվանդ Զորյանը,** ում խոսքերով, ինչպես այս, այնպես էլ գրքի հետագա թողարկումները նոր էջ կբացեն հայկական ինքնության բացահայտման գործում: Գրքում ներկայացված են հայկական լեռնաշխարհի բազմադարյա մշակույթը, շրջակա միջավայրը եւ վարչական տարածաշրջանային բաժանումները, որոնցից յուրաքանչյուրը հագեցած է պատկերներով եւ տեսանյութերով: Ըստ Երվանդ Զորյանի, գրքի առաջին մասի՝ «Հայկական լեռնաշխարհ»-ի թեմայի ընտրությունը բացատրվում է նրանով, որ հենց հայկական լեռնաշխարհից են սկիզբ առնում մեր ազգային արմատներն ու պատմությունը եւ հենց հայկական լեռնաշխարհով են պայմանավորված մեր պատմության եւ ազգային ճակատագրի առանձնահատկությունները:

Գիրքը սկզբնական շրջանում ընթերցողին կներկայանա հայերեն եւ անգլերեն լեզուներով, այնուհետեւ 5 լեզուներով եւս՝ թուրքերենով, իսպաներենով, ֆրանսերենով, ռուսերենով եւ արեւմտահայերենով: Գիրքը ընդգրկում է Հայաստանին վերաբերող թեմաների բավական լայն շրջանակ՝ պատմություն, մշակույթ, տուրիզմ, տնտեսություն եւ այլն: Երվանդ Զորյանի տեղեկացմամբ, գիրքը կազմելիս հաշվի են առնվել ընթերցողների բազմազանությունը եւ գրքից սպասվող նրանց ակնկալիքները, ուստի փորձ է արվել տեղեկատվությունը մատուցել մատչելի լեզվով՝ միաժամանակ պահպանելով նաեւ ոճային ինքնատիպությունը:

Ընթերցողները հնարավորություն ունեն հարցաշարերի միջոցով գնահատել սեփական առաջընթացը, առանձնացնել ժամանակաշրջանի կարեւորագույն իրադարձությունները եւ ծանոթանալ հատուկ այդ աղբյուրի համար մշակված հարուստ բառապաշարին:

Գիրքը բոլորի համար կլինի անվճար եւ ամենուրեք հասանելի: Բացի թողարկված տեսաերիզներից, ցանկացած ընթերցող բավական հեշտ ներբեռնումով կկարողանա այն ընթերցել մոբայլ սարքերով, պլանշետներով եւ այլն: Որքա՞ն է գրքում հնարավոր եղել պահպանել նյութերի գիտական հավաստիություն եւ ի՞նչ աղբյուրներ են օգտագործվել, Երվանդ Զորյանն, ասաց, որ դրանք վերցվել են ՀՎՀ-ի ուսումնական գրականությունից, ակադեմիական ամսագրերից, պատմական փաստաթղթերից, բուհերում կիրառվող կրթական նյութերից եւ այլն: Իսկ ինչ վերաբերում է գրքի ակադեմիական խորությանը, ապա, բանախոսի հավաստմամբ, այն կարող է ծառայել որպես գիտական աղբյուր՝ շնորհիվ գրքում տեղ գտած ճշգրիտ եւ մանրակրկիտ ուսումնասիրությունների:

Գրքի առանձնահատկություններից մեկն այն է, որ տեղեկատվությանը զուգահեռ միաժամանակ մեկնաբանվում է նաեւ նյութը տեսաշարի ձեւով, տեսողական 3-D էֆեկտներով, լուսանկարներով, տեսահոլովակներով, իրադարձությունների ժամանակագրությամբ, դինամիկ քարտեզներով եւ այլն:

Նախատեսվում է առաջիկա ամիսներին թողարկել հաջորդ գրքերը եւս, որոնցից երկուսն, ի դեպ, նույնպես հիմնված կլինեն վերոհիշյալ աղբյուրների վրա եւ կներկայացնեն Հայաստանի տնտեսությունը, տուրիզմն ու փոփ մշակույթը: Իսկ մնացած թողարկումները կընդգրկեն տարբեր բնագավառներ՝ ճարտարապետություն, երաժշտություն, գեղարվեստ, ժողովրդական մշակույթ եւ այլն: Այդ գրքերի միջոցով, բանախոսի վստահեցմամբ, կընդլայնվի նաեւ ՀՎՀ-ի վիրտուալ լսարաններում ընդգրկված միջազգային ուսանողների շրջանակը: Ի դեպ, ըստ նրա, աշխարհի տարբեր վայրերի կրթական համակարգի ներկայացուցիչներն ու ուսանողները բավական մեծ անհամբերությամբ են սպասել այս գրքի վիրտուալ թողարկմանը, եւ այն իրականություն դարձնելու ցանկությամբ էլ պայմանավորված է եղել գրքի թողարկումը:

### *Հայաստանը կմասնակցի «Satte» զբոսաշրջային ցուցահանդեսին*

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը Հայաստանը կներկայացնի Հնդկաստանի մայրաքաղաք Նյու Դելիում հունվարի 29-31-ին կայանալիք «Satte» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին: Ինչպես «Արմենպրեսին» տեղեկացրին ՀԱՄՀ հանրային կապերի գրասենյակից, ցուցահանդեսի ընթացքում միջազգային հանրությանը կներկայացվեն Հայաստանի պատմամշակութային եւ քրիստոնեական հարուստ ժառանգությունը ցուցադրող գովազդային նյութեր եւ քարտեզներ: «Satte» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսն Ասիայում զբոսաշրջության ոլորտի ամենամեծ միջոցառումներից մեկն է, որին մասնակցում են շուրջ 50 երկրների 600 զբոսաշրջային կազմակերպություններ եւ 7500 առեւտրային գործակալներ: Խոշորագույն այս ցուցահանդեսին ՀԱՄՀ մասնակցությունը նպատակ ունի խթանելու Հայաստանի ներկայացվածությունը հնդկական շուկայում, հայկական զբոսաշրջային արդյունքների իրացման համար գործընկերային նոր կապեր հաստատել եւ նպաստել ներգնա զբոսաշրջության աճին: